Att. Mr. FRANK BAÏRAMIAN

«ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», № 6 (481), 2002

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԿՅԱՆՔ

# ԾԱՆՈԹԱՑԵՔ. ՖՐԱՆԿ ՎԱԶԳԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ



Վազգենը (ձախից) եւ Վարուժան Բայրամյան եղբայրները Պետրոսյանի անվան նորաստեղծ ակումբում:

«Շախմատային Հայաստանը» արդեն հայտնել է, որ Փարիզի մերձակայքում բացվել է Տիգրան Պետրոսյանի անունը կրող շախմատային ակումբ: Այս գեղեցիկ նախաձեռնության հեղինակը եւ ակումբի նախագահը Ֆրանկ Վազգեն Բայրամյանն է: Վերջին շաբաթների ընթացքում ֆրանսահայ շախմատիստը մշտական նամակագրության մեջ է մեր պարբերականի հետ, եւ մենք հնարավորություն ունենք ներկայացնել շախմատին ֆանատիկորեն նվիրված Վազգենին ու նրա ընտանիքը:

Բայրամյանները ծագումով Իգդիրից են: 1915-ի ցեղասպանությունից հետո նրանք տեղափոխվել են նախ Հունաստան, եւ ապա՝ Ֆրանսիա: Վազգենի պապիկներից մեկը եղել է վարսավիրանոցի տնօրեն, մյուսը՝ կանացի հագուստների դերձակ: Բայց վերջինս նաեւ պոետ էր եւ փիլիսոփա եւ, Վազգենի մոր վկայությամբ, անգամ հրապարակումներ ունի Հայաստանում:

Վազգենի հայրը՝ Հակոբ (Ժակ) Բայրամյանը, բիզնեսմեն է, մայրը՝ Իրմա Դավթյանը, ինչպես ընդգծում է որդին, տաղանդավոր դաշնակահարուհի է եւ միաժամանակ... յոգայի ուսուցիչ: Հետաքրքիր է, որ Բայրամյանների ընտանիքն այժմ ամբողջ կազմով մասնակցում է նորաստեղծ ակումբի աշխատանքներին: Եվ դա պատահական չէ. շախմատիստներ են նաեւ թե՛ պարոն Հակոբը, թե՛ Վազգենի ավագ եղբայրը՝ մասնագիտությամբ հաշվապահ Ֆիլիպ Վարուժանը, որն ակումբի փոխնախագահն է եւ գանձապահը:

Ինքը՝ Ֆրանկ Վազգեն Բայրամյանը, որն այժմ 35 տարեկան է, ծնվել եւ ապրում է Փարիզի արվարձաններից մեկում: Նա ուսանել է Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի՝ Կալիֆորնիայի Սան Դիեգո քաղաքի, համալսարաններում: Այժմ աշխատում է համակարգչային կենտրոնում որպես մենեջեր, ղեկավարում է 80 անձից կազմված աշխատանքային խումբը: Այս կենտրոնը համագործակցում է ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի խոշոր ընկերությունների հետ:

Բայրամյանի շախմատային նվաճումները առաջին հերթին կապված են հեռակա խաղի հետ: Նրա անհատական վարկանիշը հասել է 2400-ի սահմանները: Գործնական խաղին զուգահեռ Ֆրանկը զբաղվում է նաեւ տեսական վերլուծություններով: Բնութագրական է, որ հայ շախմատիստի պարտիաները ու վերլուծությունները տպագրվել են անգամ հոլանդական նշանավոր «Նյու ին Չես» պարբերականում:

Վազգենն ակնհայտորեն ֆանտազիայով եւ մոտիվացումներով լի անձնավորություն է: Պատահական չէ, որ Պետրոսյանի անվան ակումբը նախատեսում է ակտիվորեն զբաղվել ոչ միայն դասական շախմատով. մեծ տեղ է հատկացվելու, մասնավորապես, «Ֆիշերի շախմատի» տարածմանը:

Ֆրանսահայ շախմատիստը երաժշտության մեծ սիրահար է՝ զգացվում է մոր ազդեցությունը: Վազգենը եղել եւ մնում է մոդայիկ երաժշտական խմբերի երկրպագու եւ անձնական ծանոթություններ ունի համբավավոր երաժիշտների հետ:

Բայրամյանի մյուս սերը Ֆորմուլա-1-ն է: Նա մտերիմ է Այրտոն Սեննայի ընտանիքի հետ: Վազգենը իր ընկերների հետ կազմակերպել է երեկոներ Այրտոնի եւ Ֆորմուլա-1-ի մյուս աստղերի պատվին, ձայնագրել նշանավոր մարզիկին նվիրված երաժշտություն:

Իսկ այժմ ընթերցողներին ներկայացնենք Ֆրանկ Վազգեն Բայրամյանի խաղացած մի քանի հետաքրքիր պարտիաներ:

### ՊԱՐԱԳՈՒՍ - ԲԱՅՐԱՄՅԱՆ
[C00]

1.e4 e6 2.d3 d5 3.♘d2 c6 4.♘gf3 ♘d7 5.g3 de4 6.de4 ♗c5 7.♗g2 h6 8.0–0 ♘gf6 9.c3 0–0 10.♕e2 a6 11.♘c4 b5 12.♘e3 ♕c7 13.h4 ♗b7 14.♘h2 ♘e5 15.b4 ♗a7 16.♘f3 c5 17.♘e5 ♕e5 18.f4 ♕e7 19.e5 ♘d5 20.♘d5 ♗d5 21.♗d5 cb4 22.♔h2 ed5 23.♗b2



23...d4 24.♖ad1 dc3 25.a3 ♖ac8 26.♗c1 ba3 27.♗a3 ♗c5 28.♖a1 ♖fd8 29.♖fd1 ♖d1 30.♕d1 ♖d8 31.♕c1 ♖d2 32.♔h3 ♕d7 0–1

### ԷԿՇՏԵՅՆ - ԲԱՅՐԱՄՅԱՆ
[A13]

1.c4 e6 2.b3 d5 3.♘f3 ♘f6 4.e3 c5 5.♗b2 ♘c6 6.cd5 ed5 7.♗e2 ♗e6 8.0–0 ♗d6 9.d4 cd4 10.♘d4 0–0 11.♘c3 a6 12.♖c1 ♖c8 13.♘a4 ♘d4 14.♕d4 ♖c8 15.♖c8 ♗c8



16.♕h4 ♗e7 17.♕d4 ♗d6 18.♕h4 ½–½

### ԲԱՅՐԱՄՅԱՆ - ՑԻԿԻՆ
[B96]

1.e4 c5 2.♘f3 ♘f6 3.♘c3 d6 4.d4 cd4 5.♘d4 a6 6.♗g5 e6 7.f4 b5 8.e5 de5 9.fe5 ♕c7 10.ef6 ♕e5 11.♗e2 ♕g5 12.♕d3 ♕f6 13.♖f1 ♕g6 14.♕h3 ♖a7

